

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԱԿԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### **Առողջապահություն**

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 611 706.1 հազար դրամ: Մատուցվել է 19093.0 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից համավճար՝ 1695.0 հազ.դրամ:

- 2017թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 30 տեղից 1-ին կիսամյակի ընթացքում մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 17 քաղաքացի

- 5 քաղաքացի պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի կողմից ուղեգրվել են մարզի բուժհաստատություններ:

- Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 20 մեծահասակ և 6 երեխա:

- 2017 թ. 1-ին կիսամյակում հաշվառվել է 276 ծնունդ, 2016 թ. 1-ին կիսամյակի համեմատ նվազել է 21-ով: Մահերի թիվը 2017թ. 1 –ին կիսամյակում կազմում է 294, իսկ 2016թ. 1-ին կսամյաում՝ 273:

### **Սոցիալական ապահովության բնագավառ**

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության պահպանման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Մարզում աղքատության մակարդակը կազմում է 11.7%: Առաջին կիսամյակում նպաստ է ստացել 2002 ընտանիք, որից ընտանեկան նպաստ 1532 և սոցիալական նպաստ 470 ընտանիք: Վճարվել է 346 մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 128 ընտանիք, վճարվել է 10.9 մլն դրամ: Մարզում կենսաթոշակառուների թիվը 10245 է, որոնց 6 ամսվա ընթացքում վճարվել է շուրջ 2.8 մլրդ. դրամ կենսաթոշակ: Ավանդների փոխհատուցում է ստացել 104 մարդ, վճարվել է 18.6 մլն. դրամ:

Մարզի ՉՏԿ -ներում 2017թ. առաջին կիսամյակում գրանցվել է 1420 գործազուրկ, որից 6 ամսվա ընթացքում 171-ը տեղավորվել են աշխատանքի: Գործազրկության մակարդակը կազմում է 10.2%: